

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՈՒՓՈՒՄԵ ՁԱՆՓՈՒԱԴՅԱՆ

### ԳՎԻՆԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻՅ ՀԱՅՏԱՐԵՐՎԱԾ ԱՊԱԿԵ ՍՐՎԱԿԸ

Դվին քաղաքի պեղումները մեծ նշանակություն ունեն ոչ միայն հայկական միջնադարյան կուլտուրայի ուսումնասիրության համար, այլև հնարավորություն են տալիս ավելի որոշակի ընդգծել այն առևտրական կապերը, որը միջնադարում ունեցել է Դվինը զանազան երկրների հետ: Երկար ժամանակ լինելով Հայաստանի խոշոր վարչական և արհեստավորական կենտրոն, նա միևնույն ժամանակ հանդիսացել է միջազգային տարանջիկ առևտրի մեծ հանգույցներից մեկը:

Պատմիչների բազմաթիվ տեղեկությունները Դվինում կատարվող ընդարձակ միջազգային առևտրի մասին լրիվ կերպով հաստատվում են պեղումներից հայտարերված իրերի միջոցով: Հայտարերված որոշ իրեր խոշոր գիտական արժեք են ներկայացնում ոչ միայն առևտրական հարաբերությունների պարզաբանման կապակցությամբ, այլև երբեմն հանդիսանում են եզակի նյութ՝ Հայաստանի հետ առևտրով կապված երկրների կուլտուրայի ուսումնասիրության համար:

Այդպիսի իրերից է հանդիսանում 1953 թ. միջնաբերդում հայտարերված ապակե սրվակը, որի ուսումնասիրությունն է նվիրված այս հոդվածը:

Միջնաբերդի ներքին շերտի 33 բլոկում բացված հորերից մեկում հայտարերված բազմաթիվ իրերի շարքում, իրենց լուրատեսակությամբ աչքի էին ընկնում նուրբ կապույտ ապակույց, ոսկեդրվագ նախշերով մի սրվակի բեկորները:

Ռեստավրատոր Գ. Արեշատյանին հաջողվել է վերականգնել նրա նախնական տեսքը (նկ. 44): Սրվակը գնդաձև է, քիչ լայնացող կողերով, իր ժամանակ ունեցել է նեղ վիզ, ստորին մասում ունի օղակաձև հենակ:

Սրվակի բարձրությունն է 6,5 սմ, կենտրոնական ուռուցիկ

մասի տրամագիծը՝ 8,5 սմ, հատակի տրամագիծը՝ 4,3 սմ, բերանի պահպանված մասի արամագիծը՝ 1,5 սմ: Սրվակը պատրաստված է մուգ կապույտ գույնի լավորակ ապակուց: Արտաքին մակերեսը զարդանկարված է ոսկով և գունավոր էմալով:



Նկ. 44. Դիփնում դտնված գունազարդ ապակե սրվակը:

Սրվակի միջին մասում, իրարից մեկ սանտիմետր հեռավորության վրա տեղավորված են չորս շրջանակներ 6 սմ տրամագծով: Յուրաքանչյուր մեծ շրջանակի իրեն մեջ ունի մի փոքր շրջանակ ևս 2,8 սմ տրամագծով՝ երկզված գույզ շրջագծերով: Այս փոքր շրջանակների կենտրոնում տեղավորված են մարդկանց և կենդանիների պատկերներ:

Շրջանակներից մեկում, որը մյուսներից լավ է պահպանվել, նկարված է խոշոր դիմագծերով մի մարդ: Չնայած պատկերի փոքրությունը դիմագծերը բավականին պարզ ընդգծված են: Նա ունի մեծ քիթ, նշաձև աչքեր, կամարածև հոնքեր և մեծ բերան: Մազերն իջնում են ականջներից ցած: Նա նստած է փոքրիկ գորգի վրա, աջ ոտքը ծալված, ձախ ծունկը բարձրացրած: Հագին ունի երկար թևերով լաֆն, ազատ հագուստ. ձախ ձգված

ձեռքին բռնել է շութակ, հենված ձախ ուսին: Աջ ձեռքին բռնած է աղեղ (СМЫЧОК), որի վերին մասը դրված է շութակի լարերի վրա: Զութակի բնի վրա պարզ կերպով նշված են երեք լար,



խակ գործիքի պարանոցի ժալրին նշմարվում են չորս հորիզոնական ականջներ:

Հայանարար տեղի նեղութիւնը հնարավորութիւն չի տվել 4 ականջների համաձայն տալ չորս լարերի գծագրերը և նկարիչը բավարարվել է միայն երեքով:

Նրկրորդ շրջանակն ավելի վատ է պահպանվել: Այստեղ նկարված է առյուծ՝ ձախ թաթը բարձրացրած, մեջքի վրա թեքած պոչով: Առանձնապես խնամքով նշված են մորթու մանրամասները:

Նրկրորդ շրջանակից պահպանվել է շատ փոքր բեկոր, նկատելի է ինչ որ կենդանու պոչի ծալրը և հետին ոտքի մի փոքր մաս:

Չորրորդ շրջանակից ոչինչ չի պահպանվել: Մեծ և փոքր շրջանակների միջև տեղավորված են 6 փոքր շրջանակներ, որոնց մեջ նկարված են բաղանման թռչուններ: Սրանցից մի քանիսը գլխներին փետուրներ ունեն: Այս նկարների մեջ եղած ազատ տարածութիւնը ծածկված է խաղողի որթ հիշեցնող պարուրաձև զարդանկարներով: Սրվակի կենտրոնական մասում բոլոր պատկերները, զարդանկարները և սահմանափակող գծերը կատարված են ոսկեգույն ներկով: Վերին և ներքին մասերի զարդանկարման համար օգտագործված է գունավոր էմալ (նկ. 45): Բերանից մինչև ուռուցիկ մասն ընկած տարածութիւն վրա նկարված են 9 մարդարտածաղիկ, որոնցից յուրաքանչյուրն ունի 8 թերթիկ՝ չորսը գեղին գույնի, չորսը բաց կանաչ, միջին մասը ներկված է կարմիր գույնով:

Կենտրոնական շրջանակների ներքին մասից մինչև հատակն ընկած տարածութիւն վրա (2 սմ) կանաչ էմալով նկարված են բուսական զարդաձևեր:


Վերջին տարիներում Դվինի պեղումների ընթացքում հայտարարված են մեծ քանակութեամբ ապակե իրեր: Նրանք բազմազան են իրենց որակով, ձևերով, պատրաստման տեխնիկայով: Այդ բոլոր իրերի ժամանակաշրջանը համարվում է 9—12-րդ դարերը:

Բ. Ա. Շելկովնիկովն իր հոդվածում՝ նվիրված Դվինի կավե և ապակե անոթների ուսումնասիրութեանը<sup>1</sup>, առանձնապես ընդգծում է Դվինի ապակե իրերի հավաքածուի գիտական խոշոր նշանակութիւնը: Նա հատկապես նշում է այն հանգամանքը, որ այդ իրե-

<sup>1</sup> Б. А. Шелковников, Керамика и стекло из раскопок города Двина, «Պեռ. պատ. թանգարանի աշխատութիւններ», հ. IV, 1952:

րի մեծագույն մասն ունեն լուրաշատուկ գծեր, որոնք խոսում են հօգուտ նրանց տեղական արտադրություն:

Կ. Ղաֆադարյանը<sup>1</sup> ապակեգործության գոյությունը Հայաստանում համարում է անվիճելի փաստ և իր այս տեսակետը հաստատելու համար, բացի նյութական կուլտուրայի մնացորդներից, բերում է նաև միջնադարյան հայ պատմիչների վկայությունները Հայաստանում բարձրորակ ապակու արտադրության մասին:



Նկ. 46. Վենետիկում պահվող զուռազարդ ապակյա անոթ:

Այսպիսով, հետազոտողները Դվինում հայտաբերված ապակե իրերը բաժանում են երկու հիմնական խմբի, որոնցից մեկը համարվում է տեղական արտադրություն, մյուսը ներմուծված: Մասնագետներն առանց դժվարություն նշում են ներմուծված ապակե իրերի արևելյան, հատկապես իրանական ծագումը:

Վերը մեր նկարագրած սրվակը չի կարելի դասել ոչ առաջին և ոչ էլ երկրորդ խմբին:

Ապակու որակով, գույնով, զարդանկարների ոճով և բոլոր մանրամասներով նա խիստ կերպով տարբերվում է այլ երկու հիմնական խմբերի իրերից: Միաժամանակ նա շատ բանով

<sup>1</sup> Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան 1952, էջ 237—238:



հիշեցնում է բյուզանդական ծագում ունեցող ապակե իրերին: Դժբախտաբար բյուզանդական ապակեգործությունը գիտությունը մինչև հիմա հայտնի է միայն երկու օրինակով:

Այժմ մանրամասն քննարկենք այդ երկու օրինակը: Վենետիկի սր. Մարկոս վանքի հնագրանում պահպանվում է մի անոթ, (նկ. 46), որը 1204 թ. տեղափոխված է խաչակիրների միջոցով Կ. Պոլսից<sup>1</sup>: Սա մի խորը թաս է<sup>2</sup> պատրաստված մուգ կարմիր մանուշակագույն երանգ ունեցող ապակուց: Երկու կողմերից ունի զարդարուն կանթեր: Թասի կենտրոնական ուռուցիկ մասում տեղափոխված են լոթը շրջանակներ, որոնց կենտրոնում դեղին էմալով նկարված են դիցարանական բովանդակություն ունեցող նկարներ: Շրջանակները շրջապատված են գունավոր էմալով, նկարված մարգարտածաղիկներով: Դիմանկարների և ծաղիկների միջև եղած տարածությունները ծածկված են ոսկեդրվագ բուսական զարդարանքներով: Այս թասն իր ոճով, շրջանակավոր պատկերներով, բուսական զարդանկարներով, մարգարտածաղիկներով, տեխնիկայով (ապակու ֆատուրան, ոսկու և էմալի համատեղ օգտագործումը) շատ նման է մեր սրվակին:

Մի ալլ, նույն տիպի անոթ ևս հայտարարված է Կորնթոսում, միջնադարյան<sup>3</sup> (11—12-րդ դդ.) ապակեգործական արհեստանոցի պեղման ժամանակ (նկ. 47): Դա մի գլանաձև, նեղ և կարճ բերանով անոթ է: Պատրաստված է նուրբ կապույտ ապակուց և ինչպես վերը նկարագրված անոթը, նկարազարդված է ոսկեներկով և գունավոր էմալով: Անոթի պատերին երեք շարք երեքական շրջանակներում նկարված են թռչուններ: Շրջանակները զմեծ են կանաչ և կարմիր ներկով, թռչունները ոսկեզօծ են: Շրջանակների միջև եղած դասարկ տարածությունը ծածկված է ոսկեդրվագ զարդարանքներով:

Թեոֆիլը 1100 թ. գրված իր՝ «տարբեր արվեստների մասին» տրակտատում<sup>4</sup> մանրամասն նկարագրում է բյուզանդական ապակու արտադրության ձևերի և հատկապես նրանց նկարազարդման միջոցների մասին: Նա գրում է, որ Բյուզանդիայում նուրբ կապույտ և


<sup>1</sup> Б. А. Шелковников, Художественное стекло. Рукопись, стр. 52. Robert Schmidt, Das Glas, Berlin und Leipzig, 1922, стр 35—38.

<sup>2</sup> Հրատարակված է Pasini H. Tresora dei San Marco in Venezia, 1885, 82.

<sup>3</sup> G. R. Davidson, A mediaeval glass-factory at Corinth American Journal of Archaeology, XLIV, bon 3, 1940, էջ 297—324:

<sup>4</sup> Schedula Diversarum artium des mömibes Theophiles.

կարմիր թափանցիկ ապակուց պատրաստում էին թանկարժեք անոթներ, երկար վիզ ունեցող սրվակներ, զարդանկարում էին արծաթով, ոսկով ու գունավոր ներկով (էմալով): Մանրամասն նկարագրում է զարդանկարման տեխնիկան. գրում է, որ բլուզանդացիք վերցնում էին թերթավոր ոսկին, նրանից ձևում էին մարդկանց, կենդանիների կամ տերևների ուրվագծեր՝ ապա ջրով թրջելով միացնում էին անոթի պատերին: Այդ բոլորից հետո լավորակ անգույն ապակուց լուծույթ էին պատրաստում, որով զգուշությամբ ծածկում էին ոսկու նուրբ թերթիկները, ապա անոթը թրձում էին հնոցի մեջ: Այս ձևով կատարված զարդերը շատ ամուր էին նստում ապակու վրա:



Նկ. 47. Կորնթոսում դոնված ապակե անոթ:

Անոթի մյուս մանրամասները, հատկապես ծաղիկները, նկարվում էին դեղին, կանաչ և կարմիր ներկերով, որոնք պատրաստում էին իրենք վարպետները տարբեր գույների ապակիների փոշուց:

Մեր նկարագրած հրեք անոթներն էլ իրենց տեխնիկայով շատ նման են Թեոֆիլի նկարագրածին: Եթե Վենետիկի անոթը մուգ կարմիր գույնի է, ապա Դվինի և Կորնթոսի սրվակները կապույտ են, երկուսն էլ զարդարված ոսկով և գունավոր ներկերով, ունեն մարդկանց և կենդանիների պատկերներ և լրիվ համընկնում են վերը բերած նկարագրությանը. հիշատակված անոթներից երկուսի բլուզանդական ծաղույն անկասկած է, ուստի վստահությամբ կարող ենք ասել, որ Դվինում հայտաբերված սրվակը, որն ինչպես տեսանք շատ նման է այդ երկու անոթներին, բլուզանդական ծաղում ունի և պատկանում է բլուզանդական ապակեգործության մեջ հայտնի հազվագյուտ նմուշներին:

Ինչպես ճիշտ կերպով նշում է Շմիդտը վենետիկյան թասի կապակցությամբ, այս անոթների զարդանկարման ոճը շատ ընդհանուր գծեր ունի բլուզանդական ոսկրե իրերի զարդաքանդակների հետ, ինչպես նաև ընդհանուր է նրանց գեղարվեստական ոճը:



Ոսկրի մշակման բյուզանդացիների բարձր վարպետությունը մենք ժանոթանում ենք այդ արվեստի աչն բազմաթիվ նմուշների միջոցով, որոնք մեծ քանակությամբ մինչև մեր օրերն են հասել և պահպանվում են աշխարհի խոշորագույն թանգարաններում<sup>1</sup>։ Հատկապես նշանավոր են փղոսկրյա տուփերը, որոնք պատրաստված են մեծ վարպետությամբ և շքեղ կերպով դարդաքանդակված են մարդկանց, կենդանիների պատկերներով։ Այս տուփերի վրա կարելի է հանդիպել թե՛ աշխարհիկ և թե՛ դիցաբանական բովանդակություն ունեցող պատկերներ, կրկեսային ներկայացումներից տեսարաններ, զինվորներ, երաժիշտների պատկերներ և այլն։ Այս բոլոր դեպքերում, ինչպես և հիշատակած ապակե անոթների վրա մարդկանց և կենդանիների պատկերներն առնված են շրջանաձև կամ քառակուսի շրջանակների, մեջ, իսկ նրանց միջև ընկած դատարկ տարածությունը լցված է բուսական օրնամենտով։ Մեծ մասամբ այդ օրնամենտը խաղողի որդն է հիշեցնում։ Այս իրերի ժամանակաշրջանը հիմարվում է 10—12-րդ դարերը։

Էրմիտաժում պահպանվում են խերսոնոս (11-րդ դ.) հայտարարված մի ոսկրե քառակուսի շերտիկ, որի վրա փորագրված է առյուծ՝ շատ նման մեր սրվակի վրա նկարված առյուծին։ Կարելի է բերել նման բազմաթիվ օրինակներ, բայց այս մի քանիսը բավական են նրանց ոճային ընդհանրություն մասին խոսելու համար։

Այսպիսով, Դվինի սրվակն իր պատրաստման տեխնիկայով և հատկապես զարդարանքների արվեստի ոճով համընկնում է ոչ միայն բյուզանդական ապակե իրերին, այլև բյուզանդական արվեստն արտահայտող այլ իրերի հետ, որը և ավելի հավանական է դարձնում նրա բյուզանդական ծագումը։

Դվինի սրվակը մեծ հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն հնադեպերի համար։ Նա շատ մեծ արժեք ունի նաև երաժրատական գործիքների ուսումնասիրության համար։ Խոսքը վերաբերում է մեր փոքրիկ ջութակահարին։ Երաժիշտն իր գործիքը բռնած է հորիզոնական դիրքով, հենած ուսին։ Ինչպես նշում են մասնագետները<sup>2</sup> (Смычковые) աղեղնավոր գործիքներն արևմրտյան երկրներում հայտնի է 9-րդ դարից, և բնավ ընդունված չի եղել արևելքում։ Մեր նկարագրած գործիքը միայն պայմանա-

<sup>1</sup> Goldschmidt und Kurt Weitzmann, Die Byzantinischen Elfenbeinskulpturen des X—XIII Jahrhunderts, I Band, Berlin, 1920.

<sup>2</sup> А. Гинзбург, История виолончельного искусства, Музгиз, 1950. З. И. Ямпольский, Русское скрипичное искусство, Музгиз, 1951.

կանոններն կարելի է անվանել ջութակ, նա շատ բանով տարբերվում է ժամանակակից ջութակից, նրա բունը մեծ է, կողերի փոսերն ավելի փոքր են, վիզը կարճ, չնայած նրան, որ չորս հորիզոնական ականջներ ունի, բայց լարերը միայն հրեքն են: Իրականում մենք ունենք շատ հազվադեպ ջութակի նախատիպը հանդիսացող ֆիդելի պատկերը, որի հետագա զարգացումն է ժամանակակից ջութակը:

Ֆիդելի ծագման և զարգացման տեղը համարվում է Բալկանյան թերակղզին:

Ֆիդելը և մյուս աղեղնավոր գործիքները լայն տարածում են ունեցել նաև Բյուզանդիայում դեռևս 7-րդ դարում:

Հին աղեղնավոր գործիքների մեզ հասած պատկերները շատ հազվադեպ են: Հնագույններից մեկը, Կիևի սբ. Սոֆիա տաճարի հյուսիսասլին բուրգի որմնանկարի վրա պատկերված երաժշտի ձեռքին բռնած գործիքն է (11-րդ դ.): Առաջին հայացքից այս պատկերը շատ ընդհանուր գծեր ունի մեր երաժշտի հետ: Նույնն է և ժամանակաշրջանը: Իրականում նրանք շատ բանով տարբերվում են միմյանցից և ներկայացնում են աղեղնավոր գործիքների զարգացման երկու տարբեր ճյուղեր:

Եթե Դվինի անոթի վրա նկարված գործիքը շատ բանով հիշեցնում է ժամանակակից ջութակը և հանդիսանում է նրա նախատիպ ֆիդելը, ապա Կիևի երաժշտի գործիքը տանձաձև է, մարմնի հետ միացած պարանոցով և շատ բանով հիշեցնում է մի այլ աղեղնավոր գործիք՝ ռեբեկին, որը լայն տարածում է ունեցել արևելյան երկրներում:

Այսպիսով, փոքրիկ ֆիդելը մեզ նորից Բյուզանդիա է բերում և կրկին անգամ հնարավորություն է տալիս հաստատելու վերն արտահայտված այն կարծիքը, որ 1953 թ. Դվինում հայտնաբերված ապակե սրվակը բյուզանդական ծագում ունի և պատկանում է 11-րդ դարին:

Դվին քաղաքի աշխույժ առևտրական կապերի մասին տեղեկությունները բավական շատ և ընդարձակ են: Այդ մասին խոսում են հայկական պատմիչները՝ սկսած Մովսես Նորենացուց: Այդ կապերի լավագույն ապացույցն են այն բազմաթիվ բյուզանդական

<sup>1</sup> Р. М. Грубер, История музыкальной культуры, т. I. Москва—Ленинград, 1940.

<sup>2</sup> А. Д. Радченко, Софийский Музей. Путеводитель, Киев, 1952, էջ 52: Очерки Истории СССР IX—XIII вв. Москва, 1953, էջ 248:



գրամները, որոնք տարբեր ժամանակներում գտնվել են Դվին քաղաքի պեղումների միջոցին:

Այս փոքրիկ, բալց, գիտական խոշոր նշանակություն ունեցող իրը, մեկ անգամ ես հնարավորություն է տալիս խոսել այն լայն առևտրական կապերի մասին, որ ունեցել է Դվին քաղաքն այլ երկրների հետ: Նա միայն միջնորդ չի հանդիսացել արեւելքի և արեւմուտքի առևտրականների միջև, այլև ինքն աշխույժ առևտուր է ունեցել տարբեր երկրների հետ:

Սակայն, միայն սրանով չի սահմանափակվում Դվինի սրվակի գիտական նշանակությունը: Ինչպես արդեն նշել ենք, հանդիսանալով իր տեսակի մեջ հազվագյուտ իրերից մեկը, նա խոշոր նշանակություն ունի բյուզանդական ապակեգործության ուսումնասիրության համար:

Պահաւ արժեքավոր չէ նրա վրա նկարված ֆիդելի պատկերը երաժշտության պատմության ուսումնասիրության համար, քանի որ հանդիսանում է ազնվանավոր գործիքների, գիտության մինչև այժմ հայտնի հնագոռէյն պատկերներից մեկը:

РИПСИМЕ ДЖАНПОЛАДЯН

## СТЕКЛЯННЫЙ СОСУД ИЗ РАСКОПОК ДВИНА

### Р е з ю м е

В 1953 г. при раскопках цитадели города Двина в одной из комнат был найден стеклянный сосуд синего цвета с золотыми украшениями.

Этот флакон для благовоний принадлежит к типу тех стеклянных византийских изделий X—XI вв., о производстве которых писал Теофил в своем „Трактате“. Орнаментальные мотивы сосуда также совпадают с мотивами орнаментации прикладного искусства Византии.

До сих пор известно небольшое количество стеклянных предметов подобного типа.

Особый интерес представляет изображение сидящего скрипача, помещенное в одном из медальонов двинского флакона. Это крайне редкое и одно из самых ранних изо-

бражений прототипа скрипки-фидела, имевшая широкое распространение в Византии в X—XI вв.

Описанная в статье небольшая, но ценная находка является новым свидетельством широких торговых связей средневекового армянского города Двина не только с Востоком, но и с Западом.